«ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔ»
ուսանողական և աշակերտական
Հանրապետական օլիմպիադա
1999

ՃԱՆԱՉՈՂԱԿԱՆ-ՔԱՐՈԶՉԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ
(Աշակերտների և ուսանողների համար)

եզրափակիչ փուլ
1999թ. մայիսի 12-15-ը

Կազմակերպիչներ՝
ՀՀ սահմանադրական իրավունքի կենտրոն
ՀՀ իրավաբանների միություն ժողովրդավարության և մարդկային իրավունքների ազգային կենտրոն
Անանիա Շիրակացու ճեմարան - գիտակրթական համալիր

Աջակցությամբ՝
ՀՀ կրթուրյան և գիտության նախարարության
Մասնակցությամբ՝
“Հայաստանի դպրոցականների օլիմպիական շարժում” հասարակական կազմակերպության և “Շիրակացու ճեմարան” հիմնադրամի
Հովանավորությամբ՝
Աննա Հովնանյանի

<u>Ծրագիր</u>

մայիսի 12, չորեքշաբթի
Մասնակիցների ժամանում մարզերից և դիմավորում ավտոկայանում (օրվա ընթացքում):
Գրանցում Անանիա Շիրակացու անվան ճեմարան- գիտակրական համալրում:
15.00 ճաշ

16.30 թիմերի նախապատրաստում մրցույթի առաջի և երկրորդ փուլերին: Խորհրդակցություն թիմերի ղեկավարների հետ:
20.00 ընթրիք
20.30 դիսկոտեկ
22.30 գիշերային հանգիստ

մայիսի 13, հինգշաբթի
08.00 վերկաց
09.00 նախաճաշ
09.30 մասնակիցների հաշվառում
10.30 օլիմպիադայի եզրափակիչ փուլի հանդիսավոր բացում
11.30 մրցույթի առաջին փուլի՝ բրեյնրինգի անցկացում
14.30 ճաշ
15.00 էքսկուրսիա Երևան քաղաքով. այցելություն մատենադարան
17.00 հանդիպում ՀՀ սահմանադրական դատարանում
18.30 ընթրիք
19.30 հանդիպում կամերային թատրոնի ստեղծագործական խմբի հետ, ներկայացման դիտում
22.30 գիշերային հանգիստ

մայիսի 14 ուրբաթ
08.00 վերկաց
09.00 նախաճաշ
10.00 մրցույթի երկրորդ փուլ՝ դատավարություն
16.30 գեղավեստական համերգ
18.00 արդյունքների անփոփում և հանդիսավոր փակում
19.30 հրաժեշտի ընթրիք
22.30 գիշերային հանգիստ

մայիսի 15 շաբաթ
09.00 նախաճաշ
Օլիմպիադայի մասնակիցների մեկնում

Օլիմպիադայի տեղեկատու
հեռախոսներ սահմանադրական դատարանում՝ 52-99-91, 58-8-89
ճեմարանում՝ 64-01-02, 64-15-17, 63-39-68, 64-07-89, 54-09 (կառ.)
Հասցեն՝ Նորքի հինգերորդ զանգված, Արտեմ Միկոյանի փող., 35

<u>Նպատակը</u>
Բարձրացնել երիտասարդության իրավագիտակցությունը, նրանց տալ անհրաժեշտ

գիտելիքներ՝ մարդու իրավունքների և ազատությունների, դրանց պաշտպանության երաշխիքների ու կարգի մասին, հաղորդակից դարձնել իրավական, ժողովրդավարական պետության բնորոշ գծերին,
օգնել ճանաչելու Սահմանադրությունն ու սահմանադրական արդարադատության համակարգը:

<u>Կազմակերպման ձևը և կարգը</u>

Դպրոցներում՝ վիկտորինայի և գիտելիքների բանավոր ստուգման կազմակերպում (զրույց):
Մարզերում և բուհերում՝ օլիմպիադայի անցկացում :
Ամփոփիչ փուլում՝ գործնական խաղեր (մասնավորապես, դատավարության կազմակերպում,
որտեղ աշակերտները հանդես կգան որպես կողմեր, իսկ ուսանողները՝ դատավորներ):
Նախատեսվում է միջոցառումն անցկացնել 4 փուլով:

- մարզկենտրոններում, Երևանում (3 փնջով) և Ստեփանակերտում հրավիրվում են դպրոցների մեկական ուսուցիչ, ովքեր դասավանդում են, կամ կարող են դասավանդել, իրավունքի հիմունքներ: Նրանց համար հատուկ ծրագրով կազմակերպվում է սեմինար և տրամադրվում է անհրաժեշտ գրականություն: Ուսուցիչներին ցույց է տրվելու նաև մեթոդական օգնություն՝ դպրոցներում վիկտորինա ու գիտելիքների բանավոր ստուգում կազմակերպելու համար,
- անցկացվում է մարզային, իսկ Ստեփանակերտում՝ հանրապետական օլիմպիադա՝ յուրաքանչյուր դպրոցից երկուական աշակերտի մասնակցությամբ: Օլիմպիադայի արդյունքներով ձևավորվում է մարզային, Երևանի 4 և ԼՂՀ աշակերտական թիմեր՝ 8 աշակերտի կազմով (6-ը հիմնական անդամ և 2-ը՝ փոխարինող),
- անցկացվում է բուհական օլիմպիադա (առանձին ծրագրով) և ձևավորվում է ուսանողական 15 թիմ՝ 7-ական ուսանողի կազմով (5-ը հիմնական անդամ և 2-ը՝ փոխարինող),
- ամփոփիչ փուլում, Անանիա Շիրակացու անվան ճեմարանի (գիտական համալիր) բազայի վրա, կազմակերպվում է 15 դատավարություն, որտեղ վիճակահանությամբ աշակերտական թիմերը հանդես կգան որպես դիմող և պատասխանող կողմեր, իսկ ուսանողական թիմերը՝ որպես դատարան: Ճեմարանի աշակերտներից կձևավորվեն դատարանների աշխատակազմերը:

<u>Արդյունքների գնահատման և ամփոփման կարգը</u>

Յուրաքանչյուր փուլում արդյունքների ամփոփումը կիրականացվի տեստային համակարգի և հատուկ հանձնախմբերի միջոցով: Տեստերը կմշակվեն սահմանադրական դատարանի աշխատակազմի կողմից: Հատուկ հանձնախմբերը կձևավորի կազմկոմիտեն:

Աշխատանքների կազմակերպման պատասխանատուն
Աշխատանքների կազմակերպման պատասխանատվությունը դրվում է կազմկոմիտեի վրա: Տեղեկատվական հեռախոսներն են՝ 58-81-89, 58-81-20 կամ 52-99-91:
Արդյունքների գնահատման և խրախուսման կարգը
- դպրոցներում լաագույնը ճանաչված աշակերտներին տրվում է գրքերի փաթեթ և ՀՀ սահմանադրական իրավունք կենտրոնի պատվոգիր,
- մարզերում հաղթող ճանաչած աշակերտներին տրվում է գրքերի փաթեթ և ՀՀ սահմանադրական իրավունք կենտրոնի Պատվո վկայական, երկու տարով սահմնադրական դատարանի տեղեկագրի անվճար բաժանորդագրման իրավունք,
- հանրապետական փուլում հաղթող կարող են ճանաչվել՝
ա) դիմող կողմ- 2 թիմ՝ լավ ու լավագույն տիտղոսով,
բ) պատսխանող կողմ- 2 թիմ՝ լավ ու լավագույն տիտղոսով,
գ) դատարան- 2 թիմ՝ լավ ու լավագույն տիտղոսով:

Յուրաքանչյուր թիմի և նրա անդամների համար սահմանվում են հետևյալ մրցանակները.

- հաղթողի դիպլոմ՝ թիմի յուրաքանչյուր անդամին,
- լավագույն ճանաչված թիմերին՝ հաղթողի հատուկ զինանշան և ՀՀ սահմանադրական դատարանի հատուկ մրցանակ,
- լավ ճանաչվածներին՝ ՀՀ սահմանադրական իրավունքի կենտրոնի խրախուսական մրցանակ:
Հաղթողներին կտրվեն նաև կազմակերպիչների կողմից սահմանված այլ խրախուսական մրցանակներ:

Միջոցառման ֆինանսական ապահովումը
Միջոցառումների նյութական և ֆինանսական ապահովումը ստանձնում են կազմակերպիչները և հովանավորը:

Միջոցառման իրականացման ժամանակացանկը
- առաջին փուլ՝ սեպտեմբեր-հոկտեմբեր 1998թ.,
- երկրորդ փուլ՝ նոյեմբեր-դեկտեմբեր 1998թ.,
- երրորդ փուլ՝ փետերվար-մարտ 1999թ.,
- չորրորդ փուլ՝ ապրիլ-մայիս 1999թ.:

Ճանաչողոկան - քարոզչական ծրագրերն իրականացվում է
“Պետություն և իրավունք” 9-10-րդ դասարանների դասագրքերը և օժանդակ գրականությունը կտրամադրվեն բոլոր դպրոցներին ՀՀ սահմանադրական իրավունքի կենտրոնի կողմից ՀՀ կրթուրյան և գիտության նախարարության

միջոցով:
“Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը”, Երևան, “Մխիթար Գոշ”, 1997թ.:
“Պետության և իրավունքի հիմումքմեր”,Երևան, “Նժար”,1997թ. Վ. Ստեփանյանի խմբագրությամբ:
“Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը”,Հ. Խաչատրյան, Հ Ստեփանյան, Երևան, 1997թ.: “Ժողովրդավարություն”, Երևան, “Մխիթար Գոշ”, 1998թ.:

Մասնակիցների ցուցակ

Հանրապետական օլիմպիադայի փուլ դուրս են եկել

13 աշակերտական թիմ՝

- **“Դավիթաշեն”**
- **“Արմավիր”**
- **“Սյունիք”**
- **“Լոռի”**
- **“Գեղարքունիք”**
- **“Շիրակացի”**
- **“Վանաձոր”**
- **“Արարատ”**
- **“Գյումրի”**
- **“Շանթ”**
- **“Արագածոտն”**
- **“Զեյթուն”**
- **“Նժդեհ”**

4 ուսանողական թիմ՝

- **ԵՊՀ-1 “Իրավաբաններ”**
- **“Հրաչյա Աճառյան” համալսարան**
- **ԵՊՀ-2 “Իրավագետներ”**
- **“Գլաձոր” համալսարան**

«Սահմանադրություն և իրավունք»
հանրապետական առաջին օլիմպիադայի եզրափակիչ փուլի կազմկոմիտե

Նախագահ
Վոլոդյա Հովհաննիսյան - ՀՀ սահմանադրական դատարանի նախագահի տեղակալ
Անդամներ՝
Աշոտ Ալիխանյան - Անանիա Շիրակացու անվան ճեմարան - գիտակրթական համալիրի տնօրեն
Անահիտ Խաչատրյան - “Շիրակացու ճեմարան” հիմնադրամի նախագահի տեղակալ
Վլադիմիր Կարմիրշալյան - Ժողովրդավարության և մարդու իրավունքների ազգային կենտրոնի տնօրեն
Արա Կուբանյան - ՀՀ սահմանադրության իրավունքի կենտրոնի փոխտնօրեն
Առուշան Հակոբյան - ՀՀ սահմանադրական դատարանի աշխատակազմի ղեկավար
Աննա Հովնանյան - Օլիմպիադայի գլխավոր հովանավոր

Գագիկ Ղազինյան - ԵՊՀ իրավաբանական ֆակուլտետի դեկան
Վիկտոր Մարտիրոսյան - ՀՀ կրթության և գիտության նախարարության կրթական բարեփոխումների կենտրոնի տնօրեն
Լիդա Սահակյան - “Հայաստանի դպրոցականների օլիմպիական շարժում” հասարակական կազմակերպության պատվավոր նախագահ

“Սահմանադրություն և իրավունք”
հանրապետական առաջին օլիմպիադայի եզրափակիչ փուլի ժյուրի

Նախագահ
Ալվինա Գյուլումյան - ՀՀ սահմանադրական դատարանի անդամ
Նախագահի տեղակալ
Արմեն Զալինյան - ՀՀ սահմանադրական դատարանի իրավախոր-հրդատվական ծառայության ղեկավարի տեղակալ, իրավաբանական գիտությունների թեկնածու
Անդամներ՝
1. Առաքել Գյուլբուդաղյան - ՀՀ կրթության և գիտության նախարարության կրթական բարեփոխումների կենտրոնի գլխավոր մասնագետ
2. Արա Կուբանյան - ՀՀ սահմանադրության իրավունքի կենտրոնի փոխտնօրեն
3. Աննա Հովնանյան - Օլիմպիադայի գլխավոր հովանավոր
4. Վիգեն Քոչարյան - ԵՊՀ իրավաբանական ֆակուլտետի դասախոս, իրավաբանական գիտությունների թեկնածու

Հյուրեր

Ա.	Աբրահամյան	“Առավոտ” թերթի գլխավոր խմբագիր
Ս.	Աբրահամյան	Երևանի քաղաքապետր
Մ.	Ազիզբեկյան	“Հայաստանի դպրոցականների օլիմպիական շարժում”հասարակական կազմակերպության կենտրոնի գործադիր տնօրեն
Շ.	Սաղաթելյան	“Հայաստանի դպրոցականների օլիմպիական շարժում” հասարակական կազմակերպության կենտրոնի անդամ
Տիկ. Է.	Աթաբեկյան	ՀՀ կրթության և գիտության նախարարության միջնակարգ կրթության վարչություն
Տիկ. Վ.	Ասատուրյան	UNESCO-ի գործերով Հայաստանի ազգային

		հանձնաժողովի գլխավոր քարտուղար (հասցե՝ Հանրապետության հր., Կառավարական տուն 2)
Ժ.	Ասատրյան	ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարություն
Ա.	Ավետիսյան	ՀՀ կրթության և գիտության նախարարություն
Լ.	Արևշատյան	ՀՀ կառավարության մամուլի ծառ. ղեկավարի պաշտոնակատար
Ս.	Արևշատյան	Մատենադարանի տնօրեն
Կ.	Արեյան	Երևանի քաղաքապետի տեղակալ
Ա.	Արզումանյան	Ազգային հեռուստատեսության լրատվական վերլուծականգործակալության տնօրեն
Վ.	Արզումանյան	միջին դպրոց
Տիկ.Շ.	Աղաբեկյան	“Ռեսպուբլիկա Արմենիա” թերթի խմբագիր
Ա.	Աղաբաբյան	“Հայաստանի Հանրապետություն” թերթի գլխ. խմբագիր
Մ.	Աղաջանյան	ՀՀ կրթության և գիտության նախարարություն
Գ.	Աղուզումցյան	
	Աղուզումցյան	ճեմարան
Ա.	Ամիրյան	Ազգային ռադիոյի տնօրեն
Ա.	Անանյան	ՀՀ կրթության և գիտության նախարարության միջնակարգ կրթության վարչություն
Տիկ. Ս.	Բեգլարյան	ՀՀ կրթության և գիտության նախարարության միջնակարգ կրթության վարչություն

Տ.	Բալայան	ՀՀ ԱԺ աշխատակազմի ղեկավար
Հ.	Բաղրամյան	ճեմարան
Թոմս	Բիրաթ	Փախստականների գծով գերագույն հանձնակատար (հասցե՝ Կարլ Լիբկնեխտի 14)
Ա.	Գևորգյան	ՀՀ նախագահի առաջին օգնական, աշխատակազմի ղեկավարի առաջին տեղակալ
Ռ.	Գասպարյան	ՀՀ կրթության և գիտության նախարարություն
Վ.	Գասպարյան	ՀՀ Նախագահի աշխատակազմի իրավաբանական վարչ. պետ
Տիկ.Գ.	Գասպարյան	Երևանի Բրյուսովի անվան օտար լեզուների պետական ինստիտուտի պրոռեկտոր
Կ.	Գալուստյան	ճեմարան
Ա.	Գրիգորյան	ճեմարան
Վ.	Գրիգորյան	“Օլիմպոս” կրթահամալիրի տնօրեն
Ա.	Գյուլբուդաղյա	ՀՀ կրթության և գիտության նախարարության կրթական բարեփոխումների կենտրոնի գլխավոր մասնագետ
Տիկ. Ա.	Գյուլումյան	ՀՀ Սահմանադրական դատարանի անդամ
Մ.	Դավթյան	Երևանի Խ. Աբովյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտի ռեկտոր
Ա.	Դարբինյան	ՀՀ վարչապետ
Հ.	Դանիելյան	ՀՀ վճռաբեկ դատարանի նախագահ
Ս.	Դիլանյան	ՀՀ Սահմանադրական դատարանի մամուլի ծառայության ղեկավար

Ա. Մ.	Դրյուկով	Ռուսաստանի դաշնության դեսպան
Գ.	Եգանյան	ՀՀ սոցիալական ապահովության նախարար
Ա.	Երնջակյան	Երևանի քաղաքապետարանի մշակույթի, երիտասարդության հարցերի և սպորտի վարչության պետ
Վ.	Եղիազարյան	ԵՊՀ կիրառական մաթեմատիկայի ֆակուլտետի դեկան
Դ.	Զադոյան	ՀՀ կառավարություն ՀՀ տարածքային կառավարման և օպերատիվ հարցերի նախարար
Ա.	Զալինյան	ՀՀ Սահմանադրական դատարանի իրավախորհրդատվական ծառայության ղեկավարի տեղակալ
Ս.	Զոլյան	Երևանի Բրյուսովի անվան օտար լեզուների պետական ինստիտուտի ռեկտոր
Է.	Թադևոսյան	ՀՀ կառավարության աշխատակազմի ղեկավար
Վ.	Թոփալյան	ՀՀ կրթության և գիտության նախարարություն
Տիկ.Ա.	Թոփուզյան	ՀՀ կրթության և գիտության նախարարի տեղակալ
Մ.	Թոփուզյան	ՀՀ կառավարության իրավաբանական վարչության պետ
Ֆ.	Թոխյան	ՀՀ Սահմանադրական դատարանի անդամ
Ա.	Խաչատուրյան	ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ, ՍԻԿ խորհրդի անդամ
Ա.	Խաչատրյան	“Հրաչյա Աճառյան” համալսարանի ռեկտոր
Հ.	Խաչատրյան	Երևանի քաղաքապետարանի կոմունալ տնտեսության վարչության պետ

Հ.	Խաչատրյան	Հովնանյանի ներկայացուցիչը Հայաստանում
Ս.	Խաչատրյան	“Կրթություն” թերթի գլխավոր խմբագիր
Տիկ. Ա.	Խաչատրյան	“Շիրակացու ճեմարան” հիմնադրամի նախագահի տեղակալ
Ա.	Խանդանյան	ճեմարան
Տիկ.Ս.	Խրիմյան	Երևանի քաղաքապետարանի կրթության վարչության պետ
Հ.	Խուբլարյան	“Օրենք և իշխանություն” ամսագրի գլխավոր խմբագիր
Տիկ. Ժ.	Ծաղիկյան	Երևանի Նոր Նորքի թաղապետարանի կրթության, մշակույթի և մարմնակրթության բաժնի պետ
Գ.	Ծառուկյան	միջին դպրոց
Տիկ.Ռ.	Ծառուկյան	միջին դպրոց
Հ.	Կարապետյան	ՀՀ կառավարությանն առընթեր տեղեկատվության և գրահրատարակչության վարչության պետ
Ս.	Կարապետյան	Խորհրդային տարածքի հարկային տեսչության պետ
Վ.	Կարմիրշալյան	Ժողովրդավարության և մարդու իրավունքների ազգային կենտրոնի տնօրեն
	Դզի Ֆոյգլ	Դանիա, պրոֆեսոր մի շարք համալսարանների և Եվրոպական դատ. դատավոր է եղել
Ա.	Կուբանյան	ՀՀ Սահմանադրական իրավունքի կենտրոնի փոխտնօրեն
Ա.	Կիրակոսյան	Հայաստանի սոցիալական ներդրումների հիմնադրամի գործադիր տնօրեն

Շ.	Կիրակոսյան	ճեմարան
Ս.	Հախումյան	ԵՊՀ պրոռեկտոր
Ա.	Հակոբյան	ՀՀ Սահմանադրական դատարանի աշխատակազմի ղեկավար
Վ.	Հակոբյան	Երևանի Մ. Հերացու անվան պետական բժշկական համալսարանի ռեկտոր
Կ.	Հակոբյան	ՀՀ բնապահպանության նախարարի տեղակալ
Բ.	Հարությունյան	ԵՊՀ պատմության ֆակուլտետի դեկան
Դ.	Հարությունյան	ՀՀ արդարադատության նախարար
Գ.	Հարությունյան	ՀՀ Սահմանադրական դատարանի նախագահ
Ա.	Հարությունյան	ՀՀ Նախագահի աշխատակազմի ղեկավար
Ա.	Հարությունյան	(ճեմարան) միջին դպրոց
Հ.	Հարությունյան	ՀՀ ՆԳԱԱ նախարարի առաջին տեղակալ, ՍԻԿ խորհրդի անդամ
Ս.	Հարությունյան	ճեմարան
Խ.	Հարությունյան	ՀՀ ԱԺ նախագահ
Տ.	Հարությունյան	“Նոյան Տապան” գործակալության տնօրեն
Ս	Հարությունյան	
Տիկ.Ն.	Հարությունյան	ԵՊՀ մանկավարժության ամբիոնի վարիչ
Մ.	Հարությունյան	“Արմենպրես” գործակալության տնօրեն
Հ.	Հայրապետյան	ՀՀ կրթության և գիտության նախարարության միջնակարգ կրթության վարչություն

Կ	Հայրապետյան	ՀՀ կառավարության սոցիալական հարցերի վարչության պետ
Ա.	Հովսեփյան	ՀՀ գլխավոր դատախազ
Վ.	Հովհաննիսյան	ՀՀ Սահմանադրական դատարանի նախագահի տեղակալ
Տիկ.Գ.	Հովհաննիսյան	Նախարարություն, ընդհանուր բաժին
Հ.	Հովնանյան	
Տիկ.Ա.	Հովնանյան	
Ս.	Հունանյան	ճեմարան
	Ղազարյան	ճեմարան
Է.	Ղազարյան	ՀՀ Սահմանադրական դատարանի աշխատակազմի ղեկավարի տեղակալ
Է.	Ղազարյան	ԵՊՀ պրոռեկտոր
Պ.	Ղազարյան	Երևանի Նոր Նորքի թաղապետի խորհրդական
Վ	Ղազարյան	ՆԳ և ԱԱՆ ֆինանսաբյուջետային վարչություն
Գ.	Ղազինյան	ԵՊՀ իրավաբանական ֆակուլտետի դեկան
Գ.	Ղարիբյան	ԵՊՀ ընդհանուր տնտեսագիտության ֆակուլտետի դեկան
Ն.	Ղուկասյան	ՀՀ կրթության և գիտության նախարարության միջնակարգ կրթության վարչություն
Հ.	Ղուշչյան	“Արմենիա” հեռուստաընկերություն
Գ.	Մազմանյան	ճեմարան
Գ.	Մալխասյան	ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ

Ռ.	Մավիսակալյան	“Արմենիա” հեռուստաընկերություն
Ռ.	Մարուխյան	ՀՀ կրթության և գիտության նախարարի առաջին տեղակալ
Ռ.	Մարտիրոսյան	ԵՊՀ ռեկտոր
Վ.	Մարտիրոսյան	ՀՀ կրթության և գիտության նախարարության կրթական բարեփոխումների կենտրոնի տնօրեն
Կ.	Մարտիրոսյան	ճեմարան
	Մայքլ Լեմման	ԱՄՆ դեսպան
Ա.	Մանուկյան	ճեմարան
Պ.	Մանուկյան	ՀՀ կառավարության գործերի կառավարչի տեղակալ
Հ.	Մանուկյան	ճեմարան
Ն.	Մանուկյան	ՀՀ կրթության և գիտության նախարարության միջնակարգ կրթության վարչություն
Մ.	Մովսիսյան	“Ա1+” հեռուստաընկերության տնօրեն
Գ.	Մինասյան	Երևանի քաղաքապետարանի իրավաբանական բաժնի պետ
Ա.	Մինասյան	Երևանի քաղաքապետարանի առողջապահության և սոցիալական ծառայությունների վարչության պետ
Ս.	Մինասյան	ՀՀ կրթության և գիտության նախարարություն
Մ.	Մինասյան	Երևանի Նոր Նորքի թաղապետ
Ա.	Մխիթարյան	ճեմարան
Թ.	Մխիթարյան	1-ին դասարան

Է.	Մկրտչյան	“Սնարք” գործակալության տնօրեն
Լ.	Մկրտչյան	ՀՀ կրթության և գիտության նախարար
Լ.	Մկրտչյան	Ռուս հայկական սլավոնական համալսարանի ռեկտոր
Վ	Մկրտչյան	ՀՀ ԱԺ մամուլի ծառայության ղեկավար
Տիկ. Է.	Մկրտչյան	ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարություն
	Մնացականյան	ճեմարան
Ի.	Նազարյան	ՀՀ Նախագահի աշխատակազմ Արդարադատության խորհրդի աշխատակազմի ղեկավար
Հ.	Նազարյան	ՀՀ Սահմանադրական դատարանի անդամ
Վ.	Նազարյան	ՀՀ ԱԺ իրավաբանական ծառայության ղեկավար
Տիկ.Ֆ.	Նախշքարյան	"Գոլոս Արմենիի" թերթի գլխավոր խմբագիր
Տ.	Նաղդալյան	Ազգային հեռուստատեսության գործադիր տնօրեն
	Գարեգին Արքեպիսկոպոս Ներսիսյան	Կաթողիկոսական Ընդհանուր Փոխանորդ, Արարատյան թեմի Առաջնորդական փոխանորդ
Բ.	Նուրիջանյան	ճեմարան
Հ.	Նիկողոսյան	ՀՀ առողջապահության նախարար
Մ.	Շահզադեյան	
Ռ.	Շառոյան	ՀՀ մշակույթի, երիտասարդության հարցերի և սպորտի նախարար
Է.	Չուբարյան	ԵՊՀ պրոռեկտոր
Ս.	Պեպանյան	ՀՀ կրթության և գիտության

		նախարարության միջնակարգ կրթության վարչություն
Ռ.	Պապայան	ՀՀ Սահմանադրական դատարանի անդամ
Տիկ. Հ.	Պետրոսյան	ՀՀ Նախագահի մամուլի ծառայության ղեկավար
Գ.	Պողոսյան	ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության և իրավունքի ինստիտուտի տնօրեն
Վ.	Պողոսյան	ՀՀ Սահմանադրական դատարանի անդամ
Ժ.	Ջահանգիրյան	“Գլաձոր” համալսարանի ռեկտոր
	Տու Դոլին	Չինաստանի դեսպանատան առաջին քարտունար
	Ջու Ջաոշուեն	Չինաստանի ժողովրդական հանրապետության դեսպան
Տեր և տիկ.Տ.	Սահակյան	1-ին դասարան
Մ	Սահակյան	Կրթության և գիտության փոխնախարար
Տիկ. Լ.	Սահակյան	“Հայաստանի դպրոցականների օլիմպիական շարժում” հասարակական կազմակերպության պատվավոր նախագահ
Ս.	Սարգսյան	ճեմարանի նախկին փոխտնօրեն
Ս.	Սարգսյան	ճեմարան
Տիկ.Մ.	Սարգսյան	ՀՀ կրթության և գիտության նախարարության միջնակարգ կրթության վարչություն
Ֆ.	Սարգսյան	ՀՀ ԳԱԱ պրեզիդենտ
Վ.	Սևյան	ՀՀ Սահմանադրական դատարանի անդամ

Ա.	Սիմոնյան	ԵՊՀ ուսումնական վարչության պետ
	Ստակյան	
Գ.	Ստեփանյան	ՀՀ ԱԺ աշխատակազմի ղեկավարի օգնական
Ռ.	Ստեփանյան	ՀՀ կրթության և գիտության նախարարություն
Ռ.	Ստեփանյան	Տուրիզմի, էքսկուրսիաների հանրապետական խորհրդի նախագահ
Վ.	Ստեփանյան	ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության և իրավունքի ինստիտուտի սեկտորի վարիչ
Ա.	Սմբատյան	Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի ռեկտոր
Պ.	Վարդևանյան	Երևանի Խ. Աբովյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտի պրոռեկտոր
Ռ.	Վարդանյան	Հայաստանի դպրոցականների օլիմպիական շարժում” հասարակական կազմակերպության կենտրոնի նախագահ
Վ.	Տեր Ղևոնդյան	“Հայաստան” համահայկական հիմնադրամի գործադիր տնօրեն
Յու.	Վարդանյան	ԵՊՀ ռադիոֆիզիկայի ֆակուլտետի դեկան
	Հովնան Արքեպիսկոպոս Տերտերյան	Կանադայի թեմի առաջնորդ
Մ.	Տեր-Գուլանյան	“ԱՐ” հեռուստաընկերության նախագահ
Ա.	Ուլիխանյան	միջին դպրոց
Ռ.	Քոչարյան	ՀՀ նախագահ
Վ.	Քոչարյան	ԵՊՀ իրավաբանական ֆակուլտետի դասախոս

Վ.	Օսկանյան	ՀՀ արտաքին գործերի նախարար
Լ.	Օհանյան	“Պետություն և իրավունք” ամսագրի գլխավոր խմբագիր
Տ.	Ֆարմանյան	“02” թերթի գլխավոր խմբագիր

ՀԱՐՑԱՇԱՐ

1. Ինչո՞վ է պայմանավորված սահմանադրական իրավունքի առանձնահատուկ դերը իրավունքի համակարգում:
2. Ո՞ր հասարակական հարաբերություններն է կարգավորում սահմանադրական իրավունքը:
3. Ո՞րոնք են սահմանադրական նորմերի առանձնահատկությունները:
4. Ինչպիսի՞ առանձնահատկություններ ունեն սահմանադրական իրավահարաբերությունները:
5. Թվարկեք սահմանադրական իրավահարաբերությունների սուբյեկտներին:
6. Ո՞րտեղ և ե՞րբ է ընդունվել առաջին Սահմանադրությունը:
7. Ե՞րբ և ինչպե՞ս է ընդունվել ՀՀ գործող Սահմանադրությունը:
8. Թվարկեք պետական իշխանության կազմակերպման և գործունեության սահմանադրական սկզբունքները:
9. Ինչպե՞ս է իրականացնում իր իշխանությունը ժողովուրդը:
10. Վարքագծի ո՞ր կանոններն են անվանվում բարոյական նորմեր: Բերեք օրինակներ:
11. Մեկնաբանեք բնական իրավունքի տեսության հիմնական սկզբունքները:
12. Ի՞նչն են անվանում իրավունքի աղբյուր և ինչպիսի՞ աղբյուրներ կան:
13. Տվեք օրենքի բնորոշումը:
14. Ո՞րոնք են նորմատիվ ակտի տեսակները և ինչու են դրանց համակարգում օրենքներն օժտված գերակայությամբ:
15. Ի՞նչ է օրինականությունը և ի՞նչ առումներով է այն դիտարկվում:
16. Ի՞նչ է իրավունքի համակարգը:
17. Ո՞րոնք են իրավունքի հիմնական ճյուղերը:

18. Ի՞նչ է իրավական պետությունը:
19. Ի՞նչ եք հասկանում Սահմանադրություն ասելով և ինչպիսին է նրա դերը իրավական պետության մեջ:
20. Թվարկեք իրավական պետության սկզբունքները:
21. Ի՞նչ է նշանակում “զսպումների և հակակշիռների” համակարգ: Ո՞վքեր են իրար զսպում կամ հակակշռում:
22. Ի՞նչ է նշանակում իշխանությունների տարանջատում, ու՞մ միջև է այն կատարվում:
23. Ինչո՞վ է պայմանավորված սահմանադրական իրավունքի առանձնահատուկ դերը իրավունքի համակարգում:
24. Սահմանադրության նորմերը մեծամասամբ պետական հարկադրանքի միջոցներ չեն պարունակում: Ինչպես է այդ դեպքում ապահովվում Սահմանադրության՝ որպես հիմնական օրենքի նորմերի իրականացումը:
25. Ո՞րոնք են ՀՀ պետական տարբերանշանները
26. Ինչպիսի՞ ներկայացուցչական պետական մարմիններ գոյություն ունեն ՀՀ-ում:
27. Ի՞նչ է “քաղաքացիությունը”: Բացի քաղաքացիներից ո՞վ է բնակվում ՀՀ տարածքում:
28. Թվեք ՀՀ Սահմանադրությամբ ամրագրված իրավունքներն ու ազատությունները:
29. Ինչպիսի՞ն է ՀՀ Նախագահի կարգավիճակը իշխանությունների տարանջատման ենթատեքստում:
30. Ինչպե՞ս է ընտրվում ՀՀ Նախագահը և որքան ժամանակով:
31. Որոնք են Սահմանադրության այն նախապայմանները, որոնց պետք բավարարեն ՀՀ Նախագահի թեկնածուները:
32. Ի՞նչ մարմին է ՀՀ Ազգային ժողովը և ինչպե՞ս է այն կազմավորվում:
33. Ո՞վ կարող է Ազգային ժողովում օրենքի նախագիծ առաջարկել:
34. Ի՞նչ է նշանակում ընդհանուր, հավասար և ուղղակի ընտրական իրավունք:
35. Ի՞նչ է նշանակում մեծամասնական և համամասնական ընտրական համակարգ:
36. Ու՞մ կողմից և ինչպե՞ս է կազմվում ՀՀ կառավարությունը:
37. Ինչպիսի՞ դատական համակարգ է նախատեսում ՀՀ Սահմանադրությունը:

38. Ի՞նչ վերաքննիչ դատարաններ կան Հայաստանում:
39. Քանի՞ պալատներից բաղկացած վճռաբեկ դատարանը և ինչպես է նրանց անվանումը:
40. Ո՞րն է սահմանադրական դատարանի տեղը և դերը պետական կառուցակարգում:
41. Ո՞րն է ՍԴ-ի հիմնական խնդիրը:
42. Ո՞վ է նշանակում ՍԴ-ի անդամներին:
43. Ո՞վ կարող է լինել ՍԴ-ի անդամ:
44. Ի՞նչ լիազորություններ ունի ՍԴ-ը:
45. Ո՞վ ունի ՍԴ դիմելու իրավունք:
46. Ի՞նչ կառուցվածք և իրավասություն ունի ՀՀ կառավարությունը:
47. Ո՞րոնք են տարածքային կառավարման գործադիր մարմիններ ՀՀ-ում և քանիսն են դրանք:
48. Ո՞րն է պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների տարբերությունը:
49. Ո՞րոնք են տեղական ինքնակառավարման մարմինները ՀՀ-ում:
50. Ի՞նչ է քաղաքացիական իրավունակությունը և գործունակությունը: Որն է դրանց տարբերությունը:
51. Ո՞վքեր են համարվում մասնակիորեն գործունակ անձինք:
52. Ո՞վքեր են համարվում լրիվ գործունակ անձինք:
53. Տվեք իրավաբանական անձի բնորոշումը:
54. Սեփականության ի՞նչ ձևեր կան ՀՀ-ում:
55. Ի՞նչ իրավունքներ ունի սեփականատերը:
56. Ի՞նչ է մտավոր սեփականությունը:
57. Ի՞նչ է կտակը և ի՞նչ եք հասկանում կտակի ազատություն ասելով:
58. Ո՞րն է կտակով ժառանգման և ըստ օրենքի ժառանգման միջև տարբերությունը:
59. Ի՞նչ է ամուսնությունը:
60. Հիմնավորեք ամուսնության պետական գրանցման անհրաժեշտությունը:
61. Ի՞նչ է որդեգրումը:
62. Ի՞նչ նշանակություն ունեն խնամակալությունը և հոգաբարձությունը և ինչ տարբերություն կա դրանց միջև:
63. Ո՞րն է քրեական իրավունքի բնորոշումը և կարգավորման առարկան:
64. Ի՞նչ է հանցագործությունը:

65. Ի՞նչ է անհրաժեշտ պաշտպանությանը:
66. Ի՞նչ է ծայրահեղ անհրաժեշտությունը, ինչո՞վ է այն տարբերվում անհրաժեշտ պաշտպանությունից:
67. Ի՞նչ է պատիժը: Որոնք են պատժի նպատակները:
68. Ո՞ր տարիքից է անձը ենթակա քրեական պատասխանատվության:
69. Ի՞նչ է հայցադիմումը:
70. Ո՞վքեր են ճանաչվում ա) սահմանափակ գործունակ, բ) անգործունակ անձինք: Ովքեր են պաշտպանում նրանց իրավունքները:
71. Ի՞նչ է քրեական դատավարական իրավունքը:
72. Ի՞նչ է միջազգային իրավունքը:
73. Ի՞նչ է միջազգային իրավունքի սուբյեկտը:
74. Որոնք են Միացյալ Ազգերի Կազմակերպության գլխավոր մարմինները:
75. Ե՞րբ Հայաստանը դարձավ ՄԱԿ-ի անդամ: (1992 թ. մարտի 2)
76. Ե՞րբ և ի՞նչ նպատակներով ստեղծվեց ՄԱԿ-ը: (1945 թ. հոկտեմբերի 24)
77. Ի՞նչը նպաստեց պետության առաջացմանը.
ա) Աթենքում
բ) Հռոմում
գ) գերմանական ցեղերի մոտ:
78. Ո՞րն է "պետություն հասկացության" ժամանակակից բնորոշումը:
79. Ի՞նչ ենք հասկանում պետության ձև ասելով և ո՞րոնք են դրա տարրերը:
80. Միապետության որ ձևն է, որ սահմանափակ է, բայց սահմանադրական չէ: (Արաբական էմիրատներ)
81. 20-րդ դարում Հայաստանը 3 հանրապետություն է ունեցել: Ինչպիսի՞ն էր
ա) 1918-1920 թթ. Հայաստանի առաջին Հանրապետությունը
բ) 1920-1990 թթ. Հայաստանի երկրորդ Հանրապետությունը
գ) 1990-1991 թթ. Հայաստանի երրորդ Հանրապետությունը
1991 թթ. մինչև օրս:
82. 1788 թ. Շ. Շահամիրյանի կողմից հրատարակվեց "Որոգայթ Փառաց" աշխատանքը:
Ի՞նչ էր այն իրենից ներկայացնում:

83. Ի՞նչ կարգերի դեմ էր ուղղված “Որոգայթ Փառացը”, ինչպիսի՞ կարգեր պետք է հաստատվեր Հայաստանում Ազգային-ազատագրական պայքարի հաղթանակից հետո:

ՏՈՄՍԵՐ 1 2 3 4 5 6 7 8 9 10 11 12 13 14 15

ՏՈՄՍ 1.

1. Հայաստանի Հանրապետությունում իշխանությունը պատկանում է՝

1) ՀՀ քաղաքացիներին.
2) բոլոր մարդկանց.
3) բնակչությանը.
4) ժողովրդին:

(4, հոդվ.2)

2. Անմեղության կանխավարկածի իրավունք ունեն՝

1) ՀՀ քաղաքացիները.
2) օտարերկրացիները.
3) քաղաքացիություն չունեցող անձինք.
4) յուրաքանչյուր ոք:

(4, հոդվ.41)

3. Հանրապետության Նախագահը՝

1) օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունների բնականոն գործունեությունն ապահովողն է.
2) պետության գլուխն է.
3) գործադիր իշխանության ղեկավարն է.
4) պետության բարձրագույն պաշտոնատար անձն է:

(1, հոդվ.49)

4. ՀՀ Ազգային ժողովի հերթական նստաշրջանները գումարվում են տարեկան՝

1) մեկ անգամ.
2) երկու անգամ.

3) երեք անգամ.
4) չորս անգամ:

(2, հոդվ.69)

1. Ո՞ր հասարակական հարաբերություններն է կարգավորում սահմանադրական իրավունքը:
2. Ի՞նչ է ծայրահեղ անհրաժեշտությունը, ինչո՞վ է այն տարբերվում անհրաժեշտ պաշտպանությունից:
3. Որոնք են Միացյալ Ազգերի Կազմակերպության գլխավոր մարմինները:

ՏՈՄՍ 2.

1. Իշխանության յուրացումը որևէ կազմակերպության կամ անհատի կողմից՝
1) անթույլատրելի է.
2) հանցագործություն է.
3) իրավախախտում է.
4) արգելվում է:

(2, հոդվ.2)

2. ՀՀ քաղաքացին, միաժամանակ՝
1) չի կարող լինել այլ պետության քաղաքացի
2) կարող է լինել այլ պետության քաղաքացի, եթե նա ազգությամբ հայ է.
3) կարող է լինել ԱՊՀ անդամ որևէ պետության քաղաքացի.
4) կարող է լինել այլ պետության քաղքացի վաթսուն տարին լրանալուց հետո:

(1, հոդվ. 14)

3. Բնակարանը կարող է խուզարկվել՝
1) միայն դատարանի որոշմամբ.
2) դատարանի կամ դատախազի որոշմամբ.
3) հետաքննության մարմնի որոշմամբ.
4) նախաքննության մարմնի որոշմամբ:

(1, հոդվ.21)

4. Հայաստանի Հանրապետության վարչատարածքային միավորներն են՝
1) գյուղերն և քաղաքները.
2) մարզերն և քաղաքները.
3) համայնքները և Երևան քաղաքը.
4) մարզերը և համայնքները:

(4, հոդվ.104)

1. Ո՞րոնք են սահմանադրական նորմերի առանձնահատկությունները:
2. Ի՞նչ է “քաղաքացիությունը”: Բացի քաղաքացիներից ո՞վ կարող է բնակվել ՀՀ տարածքում:
3. Ի՞նչ իրավունքներ ունի սեփականատերը սեփականության նկատմամբ:

ՏՈՄՍ 3.

1. Պետական մարմինները և պաշտոնատար անձինք իրավասու են կատարել միայն այնպիսի գործողություններ, որոնց համար՝
1) կան իրավական հիմքեր.
2) ստանձնել են պարտավորություն.
3) լիազորված են օրենսդրությամբ.
4) լիազորված են նորմատիվ ակտերով:

(3, հոդվ. 5)

2. ՀՀ Սահմանադրության նորմերը գործում են՝
1) անմիջականորեն.
2) այլ օրենքների միջոցով.
3) նորմատիվ իրավական ակտերի միջոցով.
4) այլ ակտերի միջոցով:

(1, հոդվ.6)

3. Երևանի քաղաքապետին նշանակում է՝
1) ՀՀ վարչապետը.
2) ՀՀ կառավարությունը.
3) ՀՀ վարչապետի ներկայացմամբ՝ Հանրապետության Նախագահը.
4) ՀՀ կառավարության ներկայացմամբ՝ Հանրապետության Նախագահը:

(3, հոդվ. 108)

4. Դեսպաններին նշանակում է՝
1) ՀՀ վարչապետը՝ Հանրապետության Նախագահի համաձայնությամբ.
2) ՀՀ Ազգային ժողովը.
3) Հանրապետության Նախագահը.
4) Հանրապետության Նախագահը՝ ՀՀ վարչապետի ներկայացմամբ:

(3, հոդվ.55)

1. Թվարկեք սահմանադրական իրավահարաբերությունների սուբյեկտներին:
2. Տվեք օրենքի բնորոշումը:
3. Որո՞նք են տեղական ինքնակառավարման մարմինները ՀՀ-ում, ինչպես են ձևավորվում և քանի տարով:

ՏՈՄՍ 4.

1. Հայաստանի Հանրապետությունում երաշխավորվում է՝

1) իրավունքի գերակայությունը.

2) օրենքի գերակայությունը.

3) իրավական ակտերի գերակայությունը.

4) Հանրապետության Նախագահի հրամանագրի գերակայությունը:

(2, հոդվ.6)

2. ՀՀ Սահմանադրությունում փոփոխություններ կատարվում են՝

1) ՀՀ Ազգային ժողովի պատգամավորների ընդհանուր թվի ձայների.

2) հանրաքվեի միջոցով՝ Հանրապետության Նախագահի կամ ՀՀ Ազգային ժողովի նախաձեռնությամբ.

3) Հանրապետության Նախագահի առաջարկության հիման վրա՝ ՀՀ Ազգային ժողովի կողմից.

4) ՀՀ Ազգային ժողովի կամ Հանրապետության Նախագահի նախաձեռնությամբ՝ Սահմանադիր ժողովի կողմից:

(2, հոդվ.111)

3. Հարկեր, տուրքեր մուծելու և այլ պարտադիր վճարումներ կատարելու պարտականություններ ունեն՝

1) օտարերկրացիները.

2) ՀՀ քաղաքացիները.

3) քաղաքացիություն չունեցող անձինք

4) յուրաքանչյուր ոք:

(4, հոդվ. 46)

4. ՀՀ Ազգային ժողովում օրենքներն ընդունվում են նիստին ներկա պատգամավորների ձայների՝

1) մեկ չորրորդով.

2) մեկ երրորդով.

3) մեծամասնությամբ.

4) երկու երրորդով:

(3, հոդվ. 71)

1. Ինչպե՞ս է իրականացնում իր իշխանությունը ժողովուրդը:

2. Ինչպիսի՞ ներկայացուցչական պետական մարմիններ գոյություն ունեն ՀՀ-ում:

3. 1788 թ. Շ. Շահամիրյանի կողմից հրատարակվեց “Որոգայթ Փառաց” աշխատանքը:

Ի՞նչ էր այն իրենից ներկայացնում:

ՏՈՄՍ 5.

1. Օրենքները կիրառվում են միայն՝

1) ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունվելուց հետո.

2) Հանրապետության Նախագահի կողմից ստորագրվելուց հետո.

3) պաշտոնական հրապարակումից հետո.

4) Հանրապետության Նախագահի ստորագրման պահից մեկ ամիս անցնելուց հետո:

(3, հոդվ.6)

2. Անձնական և ընտանեկան կյանքի գաղտնիությունը երաշխավորվում է՝

1) օտարերկրացիների համար.

2) ՀՀ քաղաքացիների համար.

3) քաղքացիություն չունեցող անձանց համար.

4) յուրաքանչյուր մարդու համար:

(4, հոդվ. 20)

3. Նախարարներին նշանակում է՝

1) ՀՀ վարչապետը.

2) ՀՀ Ազգային ժողովը՝ ՀՀ վարչապետի առաջարկությամբ.

3) Հանրապետության Նախագահը.

4) Հանրապետության Նախագահը՝ ՀՀ վարչապետի առաջարկությամբ:

(4, հոդվ.55)

4. Տեղական տուրքեր և վճարներ սահմանում է՝

1) համայնքի ղեկավարը.

2) մարզպետը.

3) ՀՀ կառավարությունը.

4) համայնքի ավագանին:

(4, հոդվ.106)

1. Մեկնաբանեք բնական իրավունքի տեսության հիմնական սկզբունքները:
2. Ո՞րոնք են իրավունքի հիմնական ճյուղերը:
3. Ի՞նչ է հանցագործությունը:

ՏՈՄՍ 6.

1. Նամակագրության, հեռախոսային խոսակցությունների, փոստային, հեռագրական և այլ հաղորդումների գաղտնիության իրավունք ունեն՝

1) ՀՀ քաղքացիները.
2) պաշտոնատար անձինք.
3) յուրաքանչյուր ոք.
4) պաշտոնատար անձինք և Հայաստանի Հանրապետությունում հավատարմագրված դիվանագիտական ներկայացուցիչները:

(3, հոդվ.20)

2. Նորընտիր ՀՀ Ազգային ժողովը կազմված է լինելու՝
1) 150 պատգամավորից.
2) 131 պատգամավորից.
3) 190 պատգամավորից.
4) 60 պատգամավորից.

(2, հոդվ.63)

3. Դատախազությունը հսկողություն է իրականացնում՝
1) պետական մարմինների և պաշտոնատար անձանց գործողությունների օրինականության նկատմամբ.
2) պետական մարմինների, պաշտոնատար անձանց ֆիզիկական և իրավաբանական անձանց գործողությունների օրինականության նկատմամբ.
3) պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, պաշտոնատար անձանց, ֆիզիկական և իրավաբանական անձանց գործողությունների օրինականության նկատմամբ.
4) նախաքննության և հետաքննության օրինականության նկատմամբ:

(4, հոդվ. 103)

4. Մարզպետներին՝
1) ընտրում է մարզի բնակչությունը.
2) նշանակում է ՀՀ վարչապետը՝ տարածքային կառավարման նախարարի ներկայացմամբ.
3) նշանակում է Հանրապետության Նախագահը՝ վարչապետի ներկայացմամբ.
4) նշանակում է ՀՀ կառավարությունը:

(4, հոդվ. 107)

1. Ի՞նչն են անվանում իրավունքի աղբյուր և ինչպիսի՞ աղբյուրներ կան:
2. Թվեք ՀՀ Սահմանադրությամբ ամրագրված իրավունքներն ու ազատությունները:
3. Ո՞րն է “պետություն հասկացության” ժամանակակից բնորոշումը:

ՏՈՄՍ 7.

1. Բնակարանի անձեռնմխելիության իրավունք ունի՝

1) ՀՀ քաղքացին.
2) օտարերկրացին.
3) քաղքացիություն չունեցող անձը.
4) յուրաքանչյուր ոք:

(4, հոդվ.21)

2. Մարդը պարտավոր չէ ցուցմունք տալ՝
1) իր ծնողների դեմ.
2) ամուսնու և մերձավոր ազգականների դեմ.
3) իր, ամուսնու և մերձավոր ազգականների դեմ.
4) իր դեմ:

(3, հոդվ.42)

3. ՀՀ գլխավոր դատախազին նշանակում է՝
1) ՀՀ վարչապետը.
2) ՀՀ Ազգային ժողովը.
3) Հանրապետության Նախագահը՝ ՀՀ Ազգային ժողովի ներկայացմամբ.
4) Հանրապետության Նախագահը՝ ՀՀ վարչապետի առաջարկությամբ.

(4, հոդվ.55)

4. Հանրապետության Նախագահն ՀՀ Ազգային ժողովի ընդունած օրենքն ստանալուց հետո ստորագրում և հրապարակում է այն՝
1) տասնօրյա ժամկտում.
2) քսանմեկօրյա ժամկետում.
3) մեկամսյա ժամկետում.
4) անհապաղ:

(2, հոդվ. 55)

1. Որո՞նք են նորմատիվ ակտերի տեսակները և ինչու են դրանց համակարգում օրենքներն օժտված գերակայությամբ:
2. Ու՞մ կողմից և ինչպե՞ս է կազմավորվում ՀՀ կառավարությունը:
3. Ի՞նչ է միջազգային իրավունքը:

ՏՈՄՍ 8.

1. Հայաստանի Հանրապետությունից դուրս գալու իրավունք ունեն՝
1) ՀՀ քաղաքացիները.
2) օտարերկրացիները.
3) քաղաքացիություն չունեցող անձինք.
4) յուրաքանչյուր ոք:

(4, հոդվ.22)

2. Այլ անձանց հետ միավորումներ կազմելու իրավունք ունի՝

1) յուրաքանչյուր ոք.

2) օտարերկրացին.

3) քաղաքացիություն չունեցող անձը.

4) ՀՀ քաղաքացին:

(1, հոդվ.25)

3. Հանրապետության Նախագահը պաշտոնն ստանձնում է՝

1) ընտրվելու պահից.

2) ընտրվելուց քառասուն օր հետո.

3) ՀՀ Ազգային ժողովի հատուկ նիստում՝ ժողովրդին տրված երդմամբ.

4) ՀՀ կառավարությունը կազմավորելուց հետո:

(3, հոդվ.54)

4. Համաներում հայտարարում է՝

1) Հանրապետության Նախագահը՝ ՀՀ Ազգային ժողովի համաձայնությամբ.

2) ՀՀ Ազգային ժողովը՝ Հանրապետության Նախագահի առաջարկությամբ

3) ՀՀ վարչապետը՝ Հանրապետության Նախագահի համաձայնությամբ.

4) Հանրապետության Նախագահը՝ ՀՀ վարչապետի առաջարկով:

(2, հոդվ.81)

1. Սահմանադրության նորմերը մեծամասամբ պետական հարկադրանքի միջոցներ չեն պարունակում: Ինչպես է այդ դեպքում ապահովվում Սահմանադրության՝ որպես հիմնական օրենքի նորմերի իրականացումը:
2. Ի՞նչ ենք հասկանում պետության ձև ասելով և որո՞նք են դրա տարրերը:
3. Ինչպե՞ս են նշանակվում ՍԴ-ի անդամները:

ՏՈՄՍ 9.

1. ՀՀ տարածքում ազատ տեղաշարժվելու և բնակավայր ընտրելու իրավունք ունեն՝

1) օտարերկրացիները.

2) յուրաքանչյուր ոք.

3) քաղաքացիություն չունեցող անձինք.

4) յուրաքանչյուր քաղաքացի:

(4,հոդվ.22)

2. Պատերազմ հայտարարում է՝

1) ՀՀ Ազգային ժողովը՝ Հանրապետության Նախագահի առաջարկությամբ.
2) Հանրապետության Նախագահը՝ ՀՀ Ազգային ժողովի համաձայնությամբ.
3) ՀՀ վարչապետը՝ Հանրապետության Նախագահի համաձայնությամբ.
4) Հանրապետության Նախագահը՝ ՀՀ վարչապետի առաջարկությամբ:

(1, հոդվ.81)

3. Դատապարտյալներին ներում շնորհում է՝
1) ՀՀ Ազգային ժողովը՝ Հանրապետության Նախագահի առաջարկությամբ.
2) ՀՀ վարչապետը.
3) Հանրապետության Նախագահը.
4) Հանրապետության Նախագահը՝ ՀՀ վարչապետի ներկայացմամբ.

(3, հոդվ.55)

4. ՀՀ Սահմանադրական դատարանի որոշումները վերջնական են, վերանայման ենթակա չեն և ուժի մեջ են մտնում՝
1) հրապարակումից հետո՝ տասներորդ օրը.
2) ՀՀ պաշտոնական տեղեկագրում հրապարակելու պահից.
3) հրապարակման պահից.
4) մեկամսյա ժամկետում:

(3, հոդվ.102)

1. Ի՞նչ է իրավական պետությունը:
2. Որո՞նք են Սահմանադրության այն նախապայմանները, որոնց պետք բավարարեն ՀՀ Նախագահի թեկնածուները:
3. Ե՞րբ ստեղծվեց ՄԱԿ-ը (1945թ. հոկտեմբերի 24), և ե՞րբ Հայաստանը դարձավ ՄԱԿ-ի անդամ (1992 թ. մարտի 2):

ՏՈՄ 10.

1. Հայաստանի Հանրապետություն վերադառնալու իրավունք ունեն՝
1) յուրաքանչյուր ոք.
2) օտարերկրացիները.
3) քաղքացիություն չունեցող անձինք.
4) յուրաքանչյուր քաղաքացի:

(4, հոդվ.22)

2. Ոչ պետական ուսումնական հաստատությունների ստեղծման և գործունեության կարգը սահմանվում է՝
1) օրենքով.
2) ՀՀ կառավարության որոշմամբ.

3) նորմատիվ իրավական ակտերով.
4) գերատեսչական նորմատիվ ակտերով:

(1, հոդվ.35)

3. ՀՀ ազգային ժողովում օրենսդրական նախաձեռնության իրավունքը պատկանում է՝

1) միայն պատգամավորներին.
2) միայն ՀՀ Ազգային ժողովի մշտական հանձնաժողովներին.
3) պատգամավորներին և կառավարությանը.
4) պատգամավորին, ՀՀ կառավարությանը, Հանրապետության Նախագահին և ՀՀ վարչապետին:

(3, հոդվ.75)

4. ՀՀ Սահմանադրական դատարան կարող են դիմել՝

1) Հանրապետության Նախագահը և պատգամավորների առնվազն մեկ երրորդը.
2) Հանրապետության Նախագահը և պատգամավորների առնվազն մեկ երրորդը, ինչպես նաև Հանրապետության Նախագահի թեկնածուները՝ ընտրությունների արդյունքների հետ կապված վեճերով.
3) Հանրապետության Նախագահը և պատգամավորների առնվազն մեկ երրորդը, ինչպես նաև Հանրապետության Նախագահի և պատգամավորության թեկնածուները՝ ընտրությունների արդյունքների հետ կապված վեճերով ՀՀ կառավարությունը՝ ՀՀ Սահմանադրությամբ նախատեսված դեպքերում.
4) ՀՀ քաղաքացիները:

(3, հոդվ.101)

1. Ի՞նչ է իրավունքի համակարգը:
2. Ինչպե՞ս է ընտրվում ՀՀ Նախագահը և որքան ժամանակով:
3. Ո՞վ կարող է Ազգային ժողովում օրենքի նախագիծ առաջարկել:

ՏՈՄՍ 11.

1. Մտքի, խղճի և դավանանքի ազատության իրավունք ունեն՝

1) ՀՀ քաղաքացիները.
2) օտարերկրացիները.
3) քաղաքացիություն չունեցող անձինք.
4) յուրաքանչյուր ոք:

(4, հոդվ.24)

2. Հանրապետության Նախագահը կարող է պաշտոնանկ արվել՝

1) միայն պետական դավաճանության համար.
2) պետական դավաճանության կամ այլ ծանր հանցագործության համար.
3) ցանկացած հանցագործության համար.
4) ՀՀ ազգային ժողովի հայեցողությամբ:

(2, հոդվ. 57)

3. Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանումը հաստատում է՝
1) ՀՀ Ազգային ժողովը՝ Հանրապետության Նախագահի առաջարկությամբ.
2) Հանրապետության Նախագահը՝ ՀՀ կառավարության առաջարկությամբ.
3) ՀՀ Ազգային ժողովը՝ կառավարության առաջարկությամբ.
4) ՀՀ կառավարությունը՝ Հանրապետության Նախագահի համաձայնությամբ:

(3, հոդվ.82)

4. Տեղական ինքնակառավարման մարմիններն ընտրվում են՝
1) համայնքի սեփականությունը տնօրինելու և համայնքային նշանակության հարցեր լուծելու համար.
2) համայնքներում պետական կառավարումն ապահովելու համար.
3) տեղական տուրքեր և վճարներ գանձելու և համայնքի կառավարումն իրականացնելու համար.
4) համայնքներում կառավարության տարածքային քաղաքականությունն իրականացնելու համար.

(1, հոդվ.105)

1. Ի՞նչ է նշանակում իշխանությունների տարանջատում, “զսպումների և հակակշիռների” համակարգ: Ու՞մ միջև է այն իրականացվում:
2. Ի՞նչ մարմին է ՀՀ Ազգային ժողովը և ինչպե՞ս է այն կազմավորվում:
3. Ի՞նչ է կտակը և ի՞նչ եք հասկանում կտակի ազատություն ասելով:

ՏՈՄ 12.

1. Խոսքի ազատության իրավունք ունեն՝
1) ՀՀ քաղաքացիները.
2) ՀՀ քաղաքացիները և օտարերկրացիները.
3) ՀՀ քաղաքացիները և քաղաքացիություն չունեցող անձինք.
4) յուրաքանչյուր ոք:

(4, հոդվ.24)

2. Հանրապետության Նախագահի հրաժարականն ընդունվում է՝

1) ՀՀ Սահմանադրական դատարանի կողմից.
2) ՀՀ Ազգային ժողովի կողմից.
3) ՀՀ Սահմանադրական դատարանի կողմից՝ ՀՀ Ազգային ժողովի կողմից առաջարկությամբ.
4) ՀՀ Ազգային ժողովի և ՀՀ կառավարության համատեղ նիստում:

(2, հոդվ.58)

3. Կառավարությանը կարող է անվստահություն հայտնել ՀՀ Ազգային ժողովի պատգամավորների ընդհանուր թվի՝
1) մեկ երկրորդը.
2) մեկ երրորդը.
3) մեծամասնությունը.
4) երկու երրորդը:

(3, հոդվ.84)

4. Հայաստանի Հանրապետության գործադիր իշխանությունն իրականացնում է՝
1) ՀՀ Ազգային ժողովը՝ կառավարության միջոցով.
2) ՀՀ վարչապետը.
3) Հանրապետության Նախագահը.
4) ՀՀ կառավարությունը:

(4, հոդվ.85)

1. Ի՞նչ է նշանակում ընդհանուր, հավասար և ուղղակի ընտրական իրավունք:
2. Ո՞վ ունի ՍԴ դիմելու իրավունք:
3. Ո՞րն է քրեական իրավունքի բնորոշումը և կարգավորման առարկան:

ՏՈՄ 13.

1. Կուսակցություններ ստեղծելու իրավունք ունեն՝
1) օտարերկրացիները.
2) ՀՀ քաղաքացիները.
3) քաղաքացիություն չունեցող անձինք.
4) յուրաքանչյուր ոք:

(2, հոդվ.25)

2. Իրենց իրավունքների և ազատությունների դատական պաշտպանության իրավուքն ունեն՝
1) ՀՀ քաղաքացիները.
2) օտարերկրացիները.

3) քաղաքացիություն չունեցող անձինք.
4) յուրաքանչյուր ոք:

(4, հոդվ. 38)

3. ՀՀ կառավարության նիստերը հրավիրում և վարում է՝
1) Հանրապետության Նախագահը.
2) Հանրապետության Նախագահը կամ նրա հանձնարարությամբ՝ ՀՀ վարչապետը.
3) ՀՀ վարչապետը, իսկ եթե դա հնարավոր չէ, նախարարներից մեկը.
4) ՀՀ վարչապետը:

(2, հոդվ.86)

4. Դատական մարմինների անկախության երաշխավորը՝
1) Հանրապետության Նախագահն է.
2) արդարադատության խորհուրդն է.
3) դատարանների նախագահների խորհուրդն է.
4) ՀՀ արդարադատության նախարարությունն է:

(1, հոդվ.94)

1. Ի՞նչ է նշանակում մեծամասնական և համամասնական ընտրական համակարգ:
2. Ի՞նչ լիազորություններ ունի ՍԴ-ը:
3. Ո՞րոնք են տարածքային կառավարման գործադիր մարմինները ՀՀ-ում և քանիսն են դրանք:

ՏՈՄ 14.

1. Ընտրել և ընտրվել չեն կարող՝
1) սահմանափակ գործունակ ճանաչված անձինք.
2) դատարանի վճռով անգործունակ ճանաչված, ինչպես նաև օրինական ուժի մեջ մտած դատավճռով ազատազրկման դատապարտված և պատիժը կրող քաղաքացիները.
3) յոթանասուն և ավելի տարիք ունեցող անձինք.
4) հիվանդանոցում բուժվող անձինք:

(2, հոդվ.27)

2. Յուրաքանչյուր ոք իրավունք ունի իր իրավունքները և ազատությունները պաշտպանել՝
1) պետական մարմիններին դիմելու միջոցով.
2) բողոքի ցույցեր կազմակերպելով.
3) դատարան դիմելու միջոցով.
4) օրենքով չարգելված բոլոր միջոցներով:

(4, հոդվ. 38)

3. Հայաստանի Հանրապետությունում արդարադատությունն իրականացնում են՝

1) միայն դատարանները.

2) դատարանները և ՀՀ արդարադատության նախարարությունը.

3) դատարանները և դատախազությունը.

4) դատարանները և ՀՀ արդարադատության խորհուրդը:

(1, հոդվ.91)

4. ՀՀ Սահմանադրական դատարանի անդամն անփոփոխելի է և պաշտոնավարում է՝

1) ցմահ.

2) մինչև իր 65 տարին լրանալը.

3) մինչև կենսաթոշակային տարիքի հասնելը.

4) մինչև իր 70 տարին լրանալը:

(4, հոդվ.96)

1. Ինչպիսի՞ դատական համակարգ է նախատեսում ՀՀ Սահմանադրությունը:
2. Ո՞րն է կտակով ժառանգման և ըստ օրենքի ժառանգման տարբերությունը:
3. Ի՞նչ է անհրաժեշտ պաշտպանությանը:

ՏՈՄ 15.

1. Հողի նկատմամբ սեփականության իրավունք ունեն՝

1) քաղաքացիություն չունեցող անձինք.

2) յուրաքանչյուր ոք.

3) օտարերկրացիները.

4) ՀՀ քաղաքացիները, ինչպես նաև օտարերկրյա քաղաքացիները և քաղաքացիություն չունեցող անձինք՝ օրենքով նախատեսված դեպքերում:

(4, հոդվ. 28)

2. Դատավորը պաշտոնավարում է՝

1) ցմահ.

2) մինչև իր 65 տարին լրանալը.

3) մինչև կենսաթոշակային տարիքի հասնելը.

4) մինչև իր 70 տարին լրանալը:

(2, հոդվ.96)

3. ՀՀ Սահմանադրական դատարան ընդունում է՝

1) վճիռներ և որոշումներ.

2) վճիռներ և եզրակացություններ.

3) դատավճիռներ և վճիռներ.

4) որոշումներ և եզրակացություններ:

(4, հոդվ.102)

4. Տեղական ինքնակառավարման մարմիններն ընտրվում են՝

1) անժամկետ.

2) երեք տարի ժամկետով.

3) հինգ տարի ժամկետով.

4) համայնքի բնակչության կողմից սահմանված ժամկետով:

(2, հոդվ.105)

1. Թվարկեք պետական իշխանության կազմակերպման և գործունեության սահմանադրական հիմնադրույթները:
2. Ի՞նչ վերաքննիչ դատարաններ կան Հայաստանում:
Քանի՞ պալատներից է բաղկացած վճռաբեկ դատարանը և ինչպե՞ս է նրանց անվանումը:
3. Ի՞նչ կարգերի դեմ էր ուղղված “Որոգայթ Փառացը”, ինչպիսի՞ կարգեր պետք է հաստատվեր Հայաստանում Ազգային-ազատագրական պայքարի հաղթանակից հետո:

ԲԱՐԴ ՀԱՐՑԵՐ

1. **1. Ինչպիսի՞ գործառություններ ունի ժամանակակից պետությունը (ներքին և արտաքին):**
2. **2. Ինչո՞վ են տարբերվում նախագահական և խորհրդարանական հանրապետությունները:**
3. **3. Ի՞նչ է իրավական նորմը: Թվարկեք և բացատրեք իրավանորմի կառուցվածքային տարրերը:**
4. **4. Ի՞նչ եք հասկանում իրավական պետություն ասելով, թվարկեք նրա հատկանիշները և սկզբունքները:**
5. **5. Ի՞նչ պահանջներ է ներկայացնում Սահմանադրությունը ՀՀ Նախագահի թեկնածուին: Ինչպե՞ս է ընտրվում Նախագահը և որքան ժամանակով:**
6. **6. Ինչպե՞ս է կազմավորվում ՀՀ Ազգային ժողովը:**
7. **7. Ինչպիսի՞ կարգավիճակ ունի ՀՀ ԱԺ պատգամավորը և որոնք են դրա երաշխիքները:**
8. **8. Ու՞մ կողմից և ինչպե՞ս է կազմվում ՀՀ կառավարությունը: Ու՞մ առջև և ո՞ր դեպքերում է կառավարությունը վայր դնում իր լիազորությունները:**
9. **9. Ինչպիսի՞ դատական համակարգ է նախատեսում ՀՀ Սահմանադրությունը:**
10. **10. Որո՞նք են Սահմանադրական դտարանի կողմից լուծվող հարցերը:**

11. **11. Ի՞նչ հարցերով է ՍԴ-ը որոշում է ընդունում:**
12. **12. Ի՞նչ հարցերով է ՍԴ-ը ընդունում եզրակացություններ:**
13. **13. Ձայների ի՞նչ հարաբերակցությամբ են ընդունվում որոշումները և եզրակացությունները:**
14. **14. Որո՞նք են ՍԴ-ի կողմից գործի քննությունը մերժելու և գործի կարճման հիմքերը:**
15. **15. Որո՞նք են տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինները ՀՀ-ում:**
16. **16. Ի՞նչ է ամուսնությունը: Հիմնավորեք ամուսնության պետական գրանցման անհրաժեշտությունը:**
17. **17. Որո՞նք են աշխատանքային իրավունքի նորմերով կարգավորվող հասարակական հարաբերությունները և որո՞նք են աշխատանքային իրավունքի սուբյեկտները:**
18. **18. Ո՞րն է մեղք հասկացության քրեաիրավական բնորոշումը: Որոնք են մեղքի ձևերը:**
19. **19. Ո՞ր գործերն են դասվում հատուկ վարույթի կարգով քննվող քաղաքացիական գործերի շարքին և ինչո՞վ են դրանք առանձնանում հայցային վարույթի գործերից:**
20. **20. Ու՞մ վրա է դրված ապացուցման պարտականությունը քրեական դատավարությունում: Ինչպիսի՞ հասարակական միջոցներ է նախատեսում քրեադատավորական օրենսդրությունը:**

«ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔ» ԱՌԱՋԻՆ ՕԼԻՄՊԻԱԴԱՅԻ ՄՐՑՈՒՅԹԻ ԱՌԱՋԻՆ ՓՈՒԼԻ՝ ԲՐԵՅՆՐԻՆԳԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ 1999Թ.

Աշակերտական 13 մասնակից թիմերից բրեյնրինգում առավել բարձր միավորներով հետևյալ 8 խմբերը անցել են մրցույթի II փուլ.

1. **“Նժդեհ”**
2. **“Գյումրի”**
3. **“Լոռի”**
4. **“Շիրակացի”**
5. **“Վանաձոր”**
6. **“Գեղարքունիք”**
7. **“Արարատ”**
8. **“Արմավիր”**

«ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔ» ԱՌԱՋԻՆ ՕԼԻՄՊԻԱԴԱՅԻ ՄՐՑՈՒՅԹԻ ԵՐԿՐՈՐԴ ՓՈՒԼԻ՝ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ 1999Թ.

Երևան
Ի խումբ "Շիրակացի"

1.	Մարտիրոսյան	Գևորգ	Շիրակացու ճեմարան	Պատվոգիր
2.	Մնացականյան	Տիգրան	Շիրակացու ճեմարան	Պատվոգիր
3.	Հակոբյան	Գոռ	Շիրակացու ճեմարան	Պատվոգիր
4.	Այվազյան	Տիգրան	Շիրակացու ճեմարան	Պատվոգիր
5.	Ազատյան	Արմինե	Շիրակացու ճեմարան	Պատվոգիր
6.	Յորդանյան	Լիաննա	Շիրակացու ճեմարան	Պատվոգիր
Ղեկ.	Ասլանյան	Հակոբ	Շիրակացու ճեմարան	Պատվոգիր

Ի Ի Խումբ "Շանթ”

1.	Մարկոսյան	Ելենա	թիվ 74 դպրոց	Շնորհագիր
2.	Թադևոսյան	Արմինե	թիվ 74 դպրոց	Շնորհագիր
3.	Մովսիսյան	Աստղիկ	թիվ 74 դպրոց	Շնորհագիր
4.	Մկրտչյան	Սաթենիկ	թիվ 4 դպրոց	Շնորհագիր
5.	Խաչատրյան	Գայանե	թիվ 4 դպրոց	Շնորհագիր
6.	Առաքելյան	Մեսրոպ	թիվ 4 դպրոց	Շնորհագիր

Ղեկ.	Կարապետյան	Սուսաննա	թիվ 4 դպրոց	Շնորհագիր

III Խումբ “Նժդեհ”

1.	Պողոսյան	Մերի	թիվ 161 դպրոց	Դիպլոմ
2.	Գասպարյան	Տաթևիկ	թիվ 161 դպրոց	Դիպլոմ
3.	Սաֆարյան	Էդիտա	թիվ 161 դպրոց	Դիպլոմ
4.	Մուրադյան	Նոնա	թիվ 161 դպրոց	Դիպլոմ
5.	Հակոբյան	Գայանե	թիվ 100 դպրոց	Դիպլոմ
6.	Բադեյան	Լիլիթ	թիվ 100 դպրոց	Դիպլոմ
Ղեկ.	Գասպորյան	Թերեզա	թիվ 161 դպրոց	Դիպլոմ

IV Խումբ “Դավիթաշեն”

1.	Գասպարյան	Նելլի	թիվ 199 դպրոց	**Շնորհագիր**
2.	Գաբրիելյան	Աննա	թիվ 199 դպրոց	**Շնորհագիր**
3.	Բարսեղյան	Աննա	թիվ 199 դպրոց	**Շնորհագիր**
4.	Բակլաչյան	Գոռ	թիվ 199 դպրոց	**Շնորհագիր**
5.	Բաբայան	Ալիկ	թիվ 199 դպրոց	**Շնորհագիր**
6.	Խաչատրյան	Եղիազար	թիվ 199 դպրոց	**Շնորհագիր**
Ղեկ.	Ալեքսանյան	Էդիկ	թիվ 199 դպրոց	**Շնորհագիր**

V Խումբ “Զեյթուն” **Շնորհագիր**

1.	Համբարձումյան	Լուսինե	թիվ 44 դպրոց	**Շնորհագիր**
2.	Բադալյան	Սուսաննա	թիվ 44 դպրոց	**Շնորհագիր**
3.	Գևորգյան	Գայանե	թիվ 59 դպրոց	**Շնորհագիր**

4.	Հովսեփյան	Նատա	թիվ 8 դպրոց	**Շնորհագիր**
5.	Գևորգյան	Շավարշ	թիվ 44 դպրոց	**Շնորհագիր**
6.	Ավանեսյան	Սամվել	թիվ 99 դպրոց	**Շնորհագիր**
Ղեկ.	Մարտիրոսյան	Լիանա	թիվ 44 դպրոց	**Շնորհագիր**

Գյումրի
VI Խումբ

1.	Սարուխանյան	Անուշ	Բալատոն	**Պատվոգիր**
2.	Կորկոտյան	Աննա	Բալատոն	**Պատվոգիր**
3.	Երանոսյան	Արման	Բալատոն	**Պատվոգիր**
4.	Զաքարյան	Տաթևիկ	Բալատոն	**Պատվոգիր**
5.	Պապիկյան	Անի	Բալատոն	**Պատվոգիր**
6.	Մնացականյան	Վարդան	Բալատոն	**Պատվոգիր**
Ղեկ.	Կիրակոսյան	Ռուզաննա	Բալատոն	**Պատվոգիր**

Արարատ
VII Խումբ

1.	Ալեքսանյան	Ալբինա	թիվ N2 դպրոց	**Պատվոգիր**
2.	Սարգսյան	Մարատ	թիվ N2 դպրոց	**Պատվոգիր**
3.	Մամոյան	Իշխան	գ. Վանաշեն	**Պատվոգիր**
4.	Մինասյան	Շողիկ	գ. Վանաշեն	**Պատվոգիր**
5.	Հակոբյան	Անուշ	գ. Վանաշեն	**Պատվոգիր**
6.	Մակարյան	Գայանե	գ. Վանաշեն	**Պատվոգիր**
Ղեկ	Պետրոսյան	Ալբերտ	թիվ N2 դպրոց	**Պատվոգիր**

Գեղարքունիք
VIII Խումբ

1.	Ավետիսյան	Մաքսիմ	գ.Վարդաձոր	**Պատվոգիր**
2.	Ասատրյան	Ռոբերտ	գ.Վարդաձոր	**Պատվոգիր**
3.	Շարոյան	Կամո	գ.Վարդաձոր	**Պատվոգիր**
Ղեկ	Ավետիսյան	Վահան	գ.Վարդաձոր	**Պատվոգիր**
4.	Կարապետյան	Էդգար	Վարդենիսի վարժարան	**Պատվոգիր**
5.	Մինասյան	Ռուզաննա	Վարդենիսի վարժարան	**Պատվոգիր**
Ղեկ	Բոխյան	Գևորգ	գ.Վարդաձոր	**Պատվոգիր**

Վանաձոր
IX Խումբ

1.	Ցականյան	Ռուսլան	թիվ 1 վարժարան	**Դիպլոմ**
2.	Թումանյան	Արուս	ՎՊՄԻ վարժարան	**Դիպլոմ**
3.	Ազարյան	Նարինե	թիվ 1 վարժարան	**Դիպլոմ**
4.	Եղշատյան	Մելինե	թիվ 5 կրթ.	**Դիպլոմ**
5.	Ադամյան	Արմինե	թիվ 5 կրթ.	**Դիպլոմ**
6.	Սերոբյան	Սաթիկ	թիվ 1 վարժարան	**Դիպլոմ**
ղեկ	Եղյան	Ռոբերտ		**Դիպլոմ**

Արմավիր
X Խումբ

1.	Պետրոսյան	Արկադի	ք.Մեծամոր թիվ 2 դպր.	**Պատվոգիր**
2.	Մուրադյան	Սոնա	ք. Մեծամոր թիվ 2դպր	**Պատվոգիր**
3.	Ալեքսանյան	Նելի	Արմավիրի Վարժարան	**Պատվոգիր**

4.	Նազարյան	Նաիրա	Արմավիրի Վարժարան	**Պատվոգիր**
5.	Սարգսյան	Անժելա	ք.Էջմիածին թիվ 7դպր.	**Պատվոգիր**
6.	Տեր-Սարգսյան	Էլիզ	ք.Էջմիածին թիվ 7դպր.	**Պատվոգիր**
Ղեկ	Բաղդասարյան	Լիանա		**Պատվոգիր**

Լոռի
XI Խումբ

1.	Մինասյան	Վարդան	թիվ 1 վարժարան	**Պատվոգիր**
2.	Խաչատրյան	Շուշան	թիվ 1 վարժարան	**Պատվոգիր**
3.	Դերձյան	Ինգա	թիվ 1 վարժարան	**Պատվոգիր**
4.	Պապինյան	Հերմինե	թիվ 3 կրթ. վարժարան	**Պատվոգիր**
5.	Բարսեղյան	Մանյա	թիվ 5 կրթ.	**Պատվոգիր**
6.	Սարգսյան	Տաթև	թիվ 1 վարժարան	**Պատվոգիր**
7.	Սարդարյան	Ռուզաննա	թիվ 1 վարժարան	**Պատվոգիր**
Ղեկ.	Դավթյան	Սամվել	թիվ 1 վարժարան	**Պատվոգիր**

Սյունիք
XII Խումբ

1.	Գրիգորյան	Անի	N1 դպր.	**Շնորհագիր**
2.	Պետրոսյան	Հերմինե	N6 դպր	**Շնորհագիր**
3.	Մարտիրոսյան	Էդգար	N7 դպր	**Շնորհագիր**
4.	Գալստյան	Կարեն	N7 դպր	**Շնորհագիր**
5.	Վարդազարյան	Լիանա	N27 գիշերօթիկ դպր.	**Շնորհագիր**

6.	Սարգսյան	Սահակ	N6 դպր	**Շնորհագիր**
Ղեկ	Հարությունյան	Լյուդվիգ		**Շնորհագիր**

Արագածոտն
XIII Խումբ

1.	Գրիգորյան	Հայկուշ	ք.Աշտարակ N5	**Շնորհագիր**
2.	Մուրադյան	Անի	ք.Աշտարակ N5	**Շնորհագիր**
3.	Հարությունյան	Էդգար	ք.Աշտարակ N5	**Շնորհագիր**
4.	Պապոյան	Արթուր	ք.Աշտարակ N5	**Շնորհագիր**
5.	Քեշիշյան	Ալինա	ք.Աշտարակ N5	**Շնորհագիր**
6.	Հարությունյան	Լուիզա	ք.Աշտարակ N5	**Շնորհագիր**
7.	Խաչատրյան	Հերմինե		**Շնորհագիր**

Ուսանողական
խմբեր
I- ին խումբ

1.	Մեժլումյան	Կարեն	Գլաձորի համ.	**Պատվոգիր**
2.	Խաչատրյան	Նարինե	Գլաձորի համ.	**Պատվոգիր**
3.	Հակոբյան	Աղավնի	Գլաձորի համ.	**Պատվոգիր**
4.	Սոլոմոնյան	Նարինե	Գլաձորի համ.	**Պատվոգիր**
5.	Թադևոսյան	Լիլիթ	Գլաձորի համ.	**Պատվոգիր**

II- խումբ

1.	Հովակիմյան	Հռիփսիմե	Հր.Աճարան համ.	**Պատվոգիր**
2.	Քերոբյան	Եվա	Հր.Աճարան համ.	**Պատվոգիր**
3.	Վարդանյան	Շարմաղ	Հր.Աճարան համ.	**Պատվոգիր**
4.	Գրիգորյան	Հայկ	Հր.Աճարան համ.	**Պատվոգիր**

5.	Գյանջումյան	Էդգար	Հր.Աճարան համ.	**Պատվոգիր**

III- խումբ
“Իրավաբաններ”

1.	Ղազարյան	Լիլիթ	ԵՊՀ-1	**Դիպլոմ**
2.	Սարգսյան	Լիանա	ԵՊՀ-1	**Դիպլոմ**
3	Բեքմեզյան	Գրիգոր	ԵՊՀ-1	**Դիպլոմ**
4.	Առաքելյան	Եվա	ԵՊՀ-1	**Դիպլոմ**
5	Անդրեասյան	Կարեն	ԵՊՀ-1	**Դիպլոմ**

IV - խումբ
“Իրավագետներ”

1.	Ենգիբարյան	Վահե	ԵՊՀ-2	**Պատվոգիր**
2.	Ցրկյաշարյան	Արտակ	ԵՊՀ-2	**Պատվոգիր**
3.	Ղազինյան	Արթուր	ԵՊՀ-2	**Պատվոգիր**
4.	Ավետիսյան	Վահրամ	ԵՊՀ-2	**Պատվոգիր**
5.	Սարգսյան	Լիանա	ԵՊՀ-2	**Պատվոգիր**

ՎԻՐՏՈՒԱԼ ՕՐԵՆՔՆԵՐ

“ԼԵԶՎԻ ՄԱՍԻՆ” ՀՀ ՕՐԵՆՔ
“ԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ” ՀՀ ՕՐԵՆՔ
“ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ” ՀՀ ՕՐԵՆՔ
“ՊԱՏԳԱՄԱՎՈՐԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ” ՀՀ ՕՐԵՆՔ
“ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ” ՀՀ ՕՐԵՆՔ

Գրականություն

Գ. Հարությունյան, Վ. Ստեփանյան, Վ. Հովհաննիսյան ”Սահմանադրական վերահսկողություն” (ուսումնաօժանդակ ձեռնարկ բուհերի ուսանողների համար), Երևան, “Նժար”, 1997, 128 էջ

“Պետություն և իրավունքի հիմունքներ” (դասագիրք հանրակրթական դպրոցի 9-10-րդ դասարանների համար)/ Գ. Ղազինյանի և Ռ. Պետրոսյանի խմբագրությամբ. Երևան, “Լույս”, 1998, 336 էջ
Հ. Խաչատրյան, Հ. Ստեփանյան ”Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը”, Երևան, “Նժար”, 1997, 80 էջ
“Պետության և իրավունքի հիմունքներ” / Վ. Ստեփանյանի խմբագրությամբ, Երևան, “Նժար”, 1997, 88 էջ

ԼՈՒՍԱՆԿԱՐՆԵՐ

4